# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ջովաբեր բնակավայր 10.01.2025 թ.

2025 թվականի հունվարի 10-ին, ժամը 14:30-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Սևան համայնքի Ջովաբեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Նավիգ գրուպ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ջովաբեր բնակավայրում նախատեսվող 5000 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտոէլեկտրական կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական մասի պատասխանատու Ձ. Ջուռնաչյանը ներկայացրեց բնապահպանական միջոցառումների իրականացման վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, առաջացող հնարավոր բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, աղմուկի, հողի որակի հետ կապված:

«Նավիգ գրուպ» ընկերության տնօրենը ներկայացրեց արևակայանի կառուցման վերաբերյալ տեղեկատվություն, նշեց, որ արևակայանի կառուցումը հանդիսանում է

այլընտրանքային էներգիայի աղբյուր, որը բնապահպանական տեսակետից առավել նպատակահարմար է: Նա հավաստիացրեց, որ շինարարությունն ընթանալու է պահպանելով բոլոր նորմերը, իսկ աշխատողները ներգրավվելու են համայնքից:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց հուզող հարցերը հնչեցնելու համար:

Բնակիչները հարց բարձրացրեցին նախատեսվող արևակայանի տարածքում առկա գրունտային ճանապարհների մասին, արդյոք շարունակելու են օգտվել նշված ճանապարհներից, թե դրանք ցանկապատվելու են: Ընկերության տնօրենը պատասխանեց, որ բոլոր ճանապարհները անցանելի են լինելու բնակիչների համար և ցանկապատները նախատեսվում է կառուցել առանց ներառելու ճանապարհները:

Քննարկվեցին նաև համայնքին օգնություն ցուցաբերելու, հետագայում կանաչապատում իրականացնելու և այլ հարցեր:

Քննարկման ավարտին ներկաները հավանություն տվեցին նախատեսվող գործունեությանը, իսկ վարչական ղեկավարը նշեց, որ ողջունում է արևակայանի կառուցումը իրենց վարչական տարածքում:

Ք. Հարությունյանն ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, համայնքի վարչական ղեկավարը, համայնքապետարանի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Նավիգ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝** **Գ. Հախվերդյան**